

**ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԾՐԱԳՐՈՒՄ ԲԵՐՎԱԾ  
ՎԻՃԱԿԱԳՐՎԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Վիճակագրական ցուցանիշների սահմանումները, հաշվարկման մեթոդաբանությունը, չափորոշիչները և այլ համապատասխան տեղեկատվություն տեղադրվում է.

1.«Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական զեկույցների եռամսյակային թողարկումների «Հավելված» հատվածում: Այդ հատվածում նկարագրվում են Հայաստանի Հանրապետության հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները, դրանց հաշվարկման մեթոդաբանությունը: Հատվածը մշտապես նորացվում է միջազգային չափանիշներին համապատասխան, ավելացվում են նոր ցուցանիշներ և տրվում դրանց նկարագրությունները և սահմանումները:

2. Արժույթի միջազգային հիմնադրամի վիճակագրական վարչությունը տարբեր երկրների վիճակագրական տեղեկատվության որակի, քափանցիկության և տվյալների համադրելիության ապահովման, միջազգային հանրությանը դրանց օգտագործման ավելի լայն հնարավորությունների ընձեռնման, տեղեկատվության գործող մեթոդաբանության և դրա հետագա զարգացման ծրագրերին տեղեկացնելու նպատակով, հիմնել է Տվյալների տարածման ընդհանուր համակարգ (SSԸՀ) և Տվյալների Տարածման Հատուկ Ստանդարտների (SSՀՍ) համակարգ:

ՀՀ վարչապետի 1999թ. հոկտեմբերի 18-ի թիվ 648 որոշմամբ (փոփոխվել է 27.11.2001թ. թիվ 834 որոշմամբ), Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից 1997թ. դեկտեմբերի 19-ին հաստատված տվյալների տարածման ընդհանուր ստանդարտին անդամագրվելու, այն ներդնելու և կիրառելու գործընթացի կապակցությամբ ԱՄՀ անձնակազմի հետ քննարկումների և աշխատանքների հարցերով Հայաստանի Հանրապետությունում համակարգող է նշանակվել ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի անդամներից մեկը: Համաձայն SSԸՀ պահանջների, համակարգին անդամակցող բոլոր երկրների վիճակագրական տեղեկատվությունը նկարագրող մեթոդաբանական տվյալները (մեթատվյալները) նախապես մշակված աղյուսակների միջոցով, տեղադրվում են հատուկ այդ նպատակով բացված Ինտերնետային էջում: Նշված աշխատանքը նպատակ ունի հանրությանն առավել լայն հնարավորություններ ընձեռնել ծանոթանալու ցանկացած երկրի վիճակագրական տեղեկատվության համակարգի բաղկացուցիչ մասը կազմող ցուցանիշների, ինչպես նաև դրանց մշակման մեթոդաբանական մոտեցումների հետ: Մեթատվյալների համակարգի օգնությամբ վիճակագրական տեղեկատվության սպառողներին վիճակագրական ցուցանիշ-ների և դրանց հաշվարկման մեթոդաբանական մոտեցումների վերաբերյալ իրազեկման միջոցով կապահովվի նաև վիճակագրական տեղեկատվություն տրամադրողների թվաքանակի ավելացման և փոխվստահության մթնոլորտի ամրապնդման խնդրի լուծումը:

3.Վիճակագրական հրապարակումներում (վիճակագրական ժողովածուներ, տեղեկագրեր, տեղեկատվական ամսական զեկույցներ, վիճակագրական-վերլուծական զեկույցագրեր և այլն) առանձին հատվածներ են նվիրվում նաև դրանց մեթոդաբանական պարզաբանումներին:

4.Ինտերնետի ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության <http://www.armstat.am> էջում մշտապես զետեղվում են վիճակագրական հրապարակումները (հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով), որոնցում հիմնականում ընդգրկված են վիճակագրական ցուցանիշների սահմանումները և մեթոդաբանական պարզաբանումները:

5.Միջազգային վիճակագրական մեթոդաբանության զարգացման առաջընթացը հասանելի դարձնելու և դրան իրազեկ լինելու նպատակով, ՀՀ ԱՎԾ հասցեով ստացվում և գրադարանում պահպանվում են միջազգային տարբեր կազմակերպությունների, ինչպես նաև այլ երկրների վիճակագրական ծառայությունների հրապարակումները, որոնցում առկա են միջազգայնորեն կիրառելի վիճակագրական մեթոդաբանական նյութեր: